Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2025 թվականի մարտի 13-ի N 80-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2025 թվականի մարտի 19-ից

«Ավանդային արշավի» իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1. **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 19.03.2025թ-ից 21.03.2025թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
2. **Ավանդ՝** Արշավի շրջանակներում «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի մասնաճյուղերում և Idram&IDBank հավելվածով **10,000** ՀՀ դրամից մինչև **5,000,000** ՀՀ դրամ նոր ձևակերպված «Ապահով առանց ավելացման իրավունքի» ժամկետային ավանդ:
3. **Ավանդատու՝** Արշավի շրջանակներում ՀՀ դրամով Ավանդ ձևակերպած ֆիզիկական անձ հանդիսացող գործող և նոր հաճախորդները:
4. Արշավին մասնակցելու դեպքում հաճախորդն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

1. Այն ֆիզիկական անձինք, ովքեր կներդնեն «Ապահով» առանց ավելացման իրավունքի դրամային ավանդ սկսած 10,000 ՀՀ դրամից մինչև 5,000,000 ՀՀ դրամ Բանկի մասնաճյուղերում և Idram&IDBank հավելվածով ՝ տոկոսադրույքները կսահմանվեն հրապարակված տոկոսադրույքներից 0,5-ով բարձր :
2. Արշավի գործողության ընթացքում օնլայն և օֆլայն ավադների տոկոսադրույքները կսահմանվեն նույնությամբ , հավելյալ 0,3-ով ավել տոկոսադրույք չի գործի :
3. Արշավը գործում է 19.03.2025թ-ից 21.03.2025թ-ը ներառյալ:
4. Արշավի պայմանները չեն տարածվում 14.03.2025թ-ից խզված ավանդների վրա :
5. Արշավի շրջանակներում ձևակերպված ավանդի գործողության ավարտին պայմանագիրը ենթակա է երկարաձգման այդ պահին Բանկում գործող տոկոսադրույքներով :
6. Հաճախորդների կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով Ավանդի ձևակերպման պահին և լրացուցիչ գործողություն չի պահանջվում: